

նմուտացած է նախնեաց մատենագրութեան և Ածարանութեան : Յետոյ դարձած Պրուսա և ուսուցչութիւն ըրած : 1828 ին Պօլիս կու գալ և պահ մը իբր բարգման կը մնայ խիստիվ Մենմետ Բաշայի քով : Մինչեւ 1841, դասախօսած է Սկիտարի ձեմարանին մէջ, հասցունելով ականաւոր աշակերտներ : ձեմարանին փակումէն վերջ, քանի մը տարի զբաղած է մասնաւոր դասերով և գիրքերու նրատարակութեամբ : Վերաբացումին (1846) կրկին պաշտօնավարած իբր Տնօրէն : — Իր կեանքն ու գործունէութիւնը լրիւ իմանալ փափագողներ կրնան կարդալ Յ. Գ. Մըրըրեանի կենսագրութիւնը : Կր բաւականանանք քանի մը տողով բնիկու քե. բունդ պանպանողական մը եղած է Տերոյնց, ջատագով «խաւարեալ» կուսակցութեան և երկար ատեն զբիջ շարժած՝ լուսաւորչականներու ակոյցեան սեպուած բողոքական և կարողիկ նատարակութեանց դէմ : Ունի բազմաբիւ գործեր՝ ինքնագիր և բարգմանածոյ . — Ընթացք հայ զգրութեան . Բաղաքավարութիւն . Ճառ. առաջին մարդոց կրթութեան վրայ . Յայտարար ուղղութեան . Ճանապարհ երշանկութեան . Խորհրդածութիւնք Բասթալայ . Ճառ. Մկրտաւորեան (և) Հաղորդութեան . Հնախօսութիւն ազգաց . Բերիստոնեական . Տեսչութիւն նովուական . Չորք եղբարք . Տեղագրութիւն երուսաղէմի . Ռատմն բարոց . Բանապատ . Յաղագս մանու հալածչաց . Գիւսաց գոյութիւնը և չարութիւնը . Կենճ Բերիստոնեայ . Խորհուրդ գաղտնի ընկեանց . Բրիստ. եկեղ. կառավարութեան վրայ . Մեծն նարոյեանի մատածութիւնք . Իրաւախօն . Հնախօսութիւն Հայոց ներանտաւորեան, ևն. ևն. : Թողած է նաեւ շատ մը ձեռագրեր ուրոցմէ նշանաւորն է **39 հասար** « եկեղ. պատմութիւն » ր



ՅՈՒՆ. ԶԱՄՈՒՆՃԵԱՆ (ՏԵՐՈՅԵՆՑ)

երուսաղէմի մատենադարանը պահ : Ասոնցմէ գատ 1846 ին սկսած է նրատարակել 1. «Հասարան» քերքը, պատրիարքարանի ծախքով և Մ. Աղարոնի գործակցութեամբ, մինչեւ «Մասիս»ի երևումը (1852), 2. «Զօնայ» (1855-6), 3. «Երեւակ» (1857-66) : — Տերոյնց 1854 ի ատենները տպարան մը հիմնած է, անոր կազմածները գնելով Յովն. Մարգարեանէ (Սկիտար) որոնք նախապէս սեպականութիւնն էին Արր. Մուրատեանի (Իզմիտ) : — Իր տպարանէն լոյս բնւում են՝ բաց ի վերոյիշեալ իր գիրքերուն մէկ մասէն՝ նետեւեանները . — Տղայ կրթելու վրայ . Առաջնորդ երկնից . Յունարեն Քերականութիւն . Մարիլտ . Պարսից բազաւորը և իր փոխարքայն . Ռուգամանտ . Փարիզն յմմերիկա . Օրացոյց 1863 . 64 . 68 .) ևն. ևն., մինչեւ 1877 թ. տպագրուած Վեգիք, Քեպէնի և Աշրք Է. Բենտի խաաներու մէջ : — 1841 Մարտ 1 ին «Ռատմնական Ընկ.» մը կը կազմուի Պօլիս, նպատակ ունենալով հայ գիրքեր տպել, գլխաւորաբար Յ. Տերոյնցի գործերը : — 19րդ դարու այս ներմուն զբաղեալ-նրապարակագիրը մեռած է Սկիտար 24 Յունվար 1888 ին : — Զաւակը Զեմոր պահ մը շարունակած է հօրը գործը, լեռոյ նոյն արհեստը լքելով՝ փաստարանութեամբ պարսպած :



85ա. **Մկրտիչ Արք. Թրիմեան** . — Ծնած է Վան 4 Ապրիլ 1820 ին :

Զինուորագրութենէ խոյս տալով՝ կ'անցնի Պարսկաստան, Կովկաս ու Պօլիս՝ ուր — իբր դասաւիարակ — կը ծանօթանայ ազգին երեսելիներուն հետ, և ուր կը կորսնցունէ կինն ու աղջիկը : 1851 ին ուսուցչ. պաշտօնով կը մեկնի Թաւրա, ապա Կիլիկիա : — 1850 ին Միսնեմիսեանի տպած «Հրաւիրակ Արարատեան» իր նեղիակութիւնէն օրինակ մը կայ մեր քով որուն կողքին վրայ գրած է ինք . «Այս տաղաչափական մատենան ետու յիշատակ Զեյրունցի Տ. Ղազար քննչի վասն հանգուցեալ ծնողաց իմոց, յամի Տեսուն 1852 Նոյեմ. 13, ի Ս. Արդուն Կիլիկիոյ. Նուսատ ծոյ. Բս.ի Մկրտիչ Խրքմեան Վանցոյ» : — Կր դառնայ Պօլիս, լեռոյ ծննդավայր, և 1854 ին Գարրիիչ Նպսկէ վարդապետ կը ձեռնադրուի յԱղբամար, կուսակրօնի անուն անվտօնի պահելով : Փափաքելով օգտակար ըլլալ նոյն վանքին՝ կը մտադրէ մատան-